ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀՀ-ՄԱԾՁԲ-21/6-Պ

,,08,, հունվարի,, 2021 թ. ք. Երևան

«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ / այսուհետ՝ կատարող/ ի դեմս « Կենտրոն -2 » մասնաճյուղի տնօրեն Կ. Իլոյանը մի կողմից, և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերությունը» ՓԲԸ-ն / այսուհետ՝ պատվիրատու/ ի դեմս տնօրեն Հ. Մովսիսյանի մյուս կողմից, ստորագրեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը պարտավորվում է նշված օբյեկտներում /ընդամենը __ օբ./ կատարել ղեռատիզացիոն աշխատանքներ, ըստ կողմերի միջև պայմանավորված ժամանակացույցի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, իսկ պատվիրատուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել կատարված աշխատանքների համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավորվում է

ա/ օբյեկտներում կատարել ղեռատիզացիոն աշխատանքներ՝ իր բանվորական ուժերով, սարքավորումներով և նյութերով:

բ/ Աշխատանքները կատարել պատվիրատուի կողմից պահանջվող ժամկետներում:

2.2 Պատվիրատուն պարտավորվում է՝

ա/ Ընդունել մատուցված ծառայության վերաբերյալ կատարողական թերթիկները և հաշիվ- վավերագրերը, իսկ ծառայության ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել կատարողին:

բ/ Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

գ/Օբյեկտներում տեղադրված որսի միջոցների և սարքավորումների անհետանալու դեպքում փոխհատուցել վնասը՝ դրանց արժեքի չափով:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով կատարողի մատուցված ծառայության գինը կազմում է ամսական 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ, ԱԱՀ-ից ազատված է: Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է կանխիկ կամ անկանխիկ: Դրամական միջոցների վճարումը կատարվում է կատարողական թերթիկների հաշիվ- վավերագրերի հիման վրա, մինչև ծառայության մատուցմանը հաջորդ ամսվա 10-ը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են Կողմերի միջև 01.01.2021թ-ից ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 31.12.2021թ:

5.2 Սույն պայմանագիրը վաղաժամկետ կարող է դադարեցվել, կողմերից մեկի նախաձեռնությամբ, եթե խախտվել են պայմանագրի պայմանները, այդ մասին ոչ ուշ քան 10 օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին, նշելով հրաժարման պատճառը:

5.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից :

5.4 Սույն պայմանագիրի կնքմամբ դադարում են գործել նախկինում կնքված պայմանագրերը:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«Պատվիրատու»	« Կատարող»
Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ
հասցեն՝ Հովսեփյան ,26	հասցեն՝ Մ. Խորենացի,160
էլ. հասցեն՝	էլ. հասցեն՝ desinfection.c
հեռ. 65 00 15	հեռ. 57-35-90
Հ/Հ 2470102796740000	Հ/Հ 163068101555
ՀՎՀՀ 01540062	ՀՎՀՀ 00402063
բանկը Արդշինբանկ ՓԲԸ	բանկը Հայէկոնոմբանկի էրեբունու մասնաճյուղ
տնօրեն Հ.Մովսիսյան	« Կենտրոն -2 » մ/ճ տնօրեն Կ. Իլոյան
ստորագրություն _____	ստորագրություն _____
Կ.Տ.	Կ.Տ.